ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՆՁՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ТАНДЗУТСКИЙ МУНИЦИПОЛИТЕТ

թիվ 124

04 դեկտեմբերի 2013թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Տանձուտի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու 2013թվականի նոյեմբերի 2-ի թիվ 11 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 18թերթ

Տանձուտ համայնքի ղեկավար Ս. Պետրոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11677-13
«05» 12 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

2դեկտեմբերի2013թ. թիվ 43

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2013թվականի նոյեմբերի 2-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Լևոն Թադևոսյան | | | |
| Արտակ Հերիքյան | | | |
| Արմեն Խաչատրյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |
| Ավագ Միքայելյան | | | |

համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2013թվական

դեկտեմբերի 2

գ. Տանձուտ

Հավելված
<< Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2013թվականի դեկտեմբերի 2-ի
թիվ 43որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Օրակարգը հաստատելու մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի վարչական սահմաններում 2014թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի կողմից 2014թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

4.Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա հիմնարկների աշխատակից-ների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 17-ի N 12-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

6.Դրամական օգնություն տալու մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

7.Գույքահարկի զիջման մասին

/զեկ. Մ.Պետրոսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2դեկտեմբերի2013թ. թիվ 44- Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 2014ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

ավագանին որոշեց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի վարչական սահմաններում 2014թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ կողմ դեմ ձեռնպահ

Արտակ Հերիքյան
Արմեն Խաչատրյան
Տիգրան Սարգսյան
Լևոն Թադևոսյան
Ավագ Ճիքայելյան

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2013թվական
2դեկտեմբերի
գ. Տանձուտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական
համայնքի ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 2-ի N 44-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ

2/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա.201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների հա մար 6000 /վեց հազար/ դրամ

բ. 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 7000 /յոթ հազար/դրամ

գ.1001-ից մինչև 3000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 / երեսունհինգ հազար/ դրամ

դ.3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանու մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 50000 / հիսուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1000 /հազար/ դրամ

4/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2000 /երկու հազար/ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցներ /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 500 /հինգ հարյուր / դրամ

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի /ա/ ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ շինարարության կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2000դրամ /երկու հազար/:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել`

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/դրամ:

5. Համայնքի տարածքում`

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ /երեք հարյուր հիսուն /` մեկ քառակուսի մետրի համար

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա.հեղուկ վառելիքի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 150000դրամ

բ.սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար 200000դրամ

3/համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է `

ա.հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 6000դրամ

բ.ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում`1000դրամ

6.Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000դրամ

7.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի անվանումը օգտագործելու թույլտվության համար տեղական

տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 70000դրամ:

8. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ /հիսուն հազար/:

9.Համայնքի տարածքում՝ առևտրի ,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները /սաունաներ/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1/ առևտրի օբյեկտնեի համար 35000 /երեսուն հինգ հազար/ դրամ
2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկների համար 60000/վաթսուն հազար/դրամ
3/ վիճակախաղերի կազմակերպման համար 120000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ
4/ բաղնիքների /սաունաների / համար՝150000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ
5/ խաղատների կազմակերպման համար՝300000 /երեք հարյուր հազար/ դրամ
6/ շահումով խաղերի կազմակերպման համար՝300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1ք.մ. տեղական տուրք սահմանել՝
1/ծխախոտի արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/ դրամ
2/ այլ արտաքին գովազդի համար 1000 /մեկ հազար/ դրամ
3/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/ դրամ
4/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500դրամ /երկու հազար հինգ հարյուր/
5/դատարկ գովազդային վահանակների համար 700 / յոթ հարյուր /դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար 1000/ մեկ հազար/ դրամ:
12.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ:
13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցների վճար 1000 /մեկ հազար /դրամ:
14.Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու ,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ

չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000/մեկ հազար/դրամ:

15. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000/երեք հազար / դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ.

2 նոյեմբերի 2013թ.. թիվ 45-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

որոշեց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2014 թվականին գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտակ Հերիքյան | | | |
| Արմեն Խաչատրյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |
| Լևոն Թադևոսյան | | | |
| Ավագ Միքայելյան | | | |

Համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան

2013թվական
դեկտեմբերի 2
գյուղ Տանձուտ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Տանձուտ
գյուղական համայնքի ավագանու
2013թվականի դեկտեմբերի 2-ի
N 45-Ն որոշման

Դրույքաչափեր Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2014 թվականին գանձվող վճարների

1. Ջրամատակարարման համար գանձվող վճար սահմանել յուրաքանչյուր շնչից 100դրամ:

2. Ծնող գումար սահմանել մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայից ամսական 4000դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

2դեկտեմբերի2013թ. թիվ 46

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ավագանին որոշեց՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա հիմնարկների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արտակ Հերիքյան | | | |
| Արմեն Խաչատրյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |
| Լևոն Թադևոսյան | | | |
| Ավագ Միքայելյան | | | |

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2013թվական
դեկտեմբերի 2
գ. Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2013թվականի
դեկտեմբերի 2-ի թիվ 46 որոշման

## Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա հիմնարկների աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1 Աշխատակիցների թվաքանակը 13

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| հ/հ | հաստիքի անվանումը | հաստիքա-յին միավոր | պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|---|
| 1 | համայնքի ղեկավար | 1դրույք | 206000 |
| 2 | համայնքի ղեկավարի տեղակալ | 1դրույք | 132000 |
| 3 | համայնքի ղեկավարի օգնական | 1դրույք | 86000 |
| | **Համայնքի ղեկավարի աշխատակազմ** | | |
| 1 | գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար | 1դրույք | 138000 |
| 2 | գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ | 3դրույք | 115000 |
| 3 | գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1դրույք | 103000 |
| 4 | գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1դրույք | 91000 |

### Տեխնիկական սպասարկման անձնակազմ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | գործավար | 1դրույք | 69000 |
| 2 | էլեկտրիկ | 1դրույք | 59524 |
| 3 | հավաքարար | 1դրույք | 59524 |
| 4 | վարորդ | 1դրույք | 59524 |
| | | | |
| | **ընդամենը** | | 1348572 |

2014ԹՎԱԿԱՆԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ևՊԱՇՏՈՆԱՅԻՆԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը 3

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| | | | |
|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1դրույք | 59524 |
| 2 | հավաքարար | 1դրույք | 59524 |
| 3 | պահակ | 1դրույք | 59524 |
| | Ընդամենը | | 178572 |

2014ԹՎԱԿԱՆԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը 2

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| | | | |
|---|---|---|---|
| 1 | վարիչ | 1դրույք | 59524 |
| 2 | գրադարանավար | 1դրույք | 59524 |
| | ընդամենը | | 119048 |

2014ԹՎԱԿԱՆԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը 11

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1դրույք | 94000 |
| 2 | դաստիարակ | 2դրույք | 92600 |
| 3 | դաստիարակ | 0.5դրույք | 46300 |
| 4 | երաժշտության դաստիարակ | 0.5դրույք | 46300 |
| 5 | խոհարար | 1դրույք | 59524 |
| 6 | դաստիարակի օգնական | 2դրույք | 59524 |
| 7 | հաշվապահ | 0.5դրույք | 47000 |
| 8 | պահակ | 1դրույք | 59524 |
| 9 | աման լվացող և լվացքարար | 1դրույք | 59524 |
| | ընդամենը | | 656896 |

2014ԹՎԱԿԱՆԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1 Աշխատակիցների թվաքանակը 1

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| | | | |
|---|---|---|---|
| 1 | վարորդ | 1դրույք | 103000 |

Տանձուտ համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2013թ. թիվ 47-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 12-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետով

որոշեց՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի 2012թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N12-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1/ Վարչական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները
1/ հողի հարկի պլանով նախատեսված 8500.0 հազար դրամը պակասացնել 1600.0 հազար դրամով:
2/ հողի հարկի պլան հաստատել 6900.0 հազար դրամ:

2. Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները
1/ մանկապարտեզի պլանով նախատեսված սուբսիդիան
09/ 1 1 4511 հոդվածի 5858.5 հազար դրամը պակասեցնել 500.0հազար դրամով սուբսիդիա հաստատել 5358.5 հազար դրամ
2/ 10/ 7 1 4729 հոդվածի 1700.0հազար դրամը պակասեցնել 800.0 հազար դրամով, հաստատել 900.0հազար դրամ:
3/ 01/ 1 1 4111 հոդվածի 16773.9հազար դրամը պակասեցնել 250.0հազար դրամով, հաստատել 16523.9հազար դրամ:
4/ 01/ 1 1 4212 հոդվածի 326.4 հազար դրամը պակասեցնել 50.0հազար դրամով, հաստատել 276.4 հազար դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ կողմ դեմ ձեռնպահ

Տիգրան Սարգսյան

Արտակ Յերիքյան

Լևոն Թադևոսյան

Ավագ Միքայելյան

Արմեն Խաչատրյան

Համայնքի ղեկավար Ս. Պետրոսյան

2013թվական

դեկտեմբերի2

գ. Տանձուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

2դեկտեմբերի2013թ. թիվ 48

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց՝

1.Համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Խաչատրյան | | | |
| Արտակ Հերիքյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |
| Ավագ Միքայելյան | | | |
| Լևոն Թադևոսյան | | | |

համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2013թվական
դեկտեմբերի 2

գ.Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2013թվականի դեկտեմբերի 2-ի
թիվ 48որոշման

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացված դրամական օգնություն

| | |
|---|---|
| 1.Աթոյան Թերեզա Գառնիկի | 30000 դրամ |
| 2.Ավետիսյան Սիրուն Սուքիասի | 30000 դրամ |
| 3.Կարապետյան Արսեն Մաքսիմի | 30000 դրամ |
| 4.Մուրադյան Ռաֆիկ Սուրենի | 30000 դրամ |
| 5.Մխիթարյան Գոռ Գագիկի | 30000 դրամ |
| 6.Մելքոնյան Սուրեն Գառնիկի | 30000 դրամ |
| 7.Մինասյան Ռիմա Աբրահամի | 30000 դրամ |
| 8.Անտոնյան Արմեն Կառլենի | 30000 դրամ |
| 9.Միքայելյան Ղազար Նազարի | 30000 դրամ |
| 10.Պողոսյան Սմբատ Նիհրանի | 30000 դրամ |
| 11.Մկրտումյան Խաչիկ Արամի | 30000 դրամ |
| 12.Բարսեղյան Սիրակ Վահագնի | 30000 դրամ |
| 13.Վիրաբյան Հարազատ Արշալույսի | 30000 դրամ |
| 14.Թադևոսյան Ցոլակ Մանուկի | 30000 դրամ |

---

ընդամենը 420000դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

2դեկտեմբերի 2013թ. թիվ 49

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

որոշեց՝

1.Զիջել համայնքի բնակիչների գույքահարկը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արմեն Խաչատրյան | | | |
| Արտակ Հերիքյան | | | |
| Տիգրան Սարգսյան | | | |
| Լևոն Թադևոսյան | | | |
| Ավագ Միքայելյան | | | |

Համայնքի ղեկավար Մ. Պետրոսյան

2013թվական
դեկտեմբերի 2
գ. Տանձուտ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Տանձուտ գյուղական համայնքի
ավագանու 2013թվականի դեկտեմբերի 2-ի
թիվ 49որոշման

Ցուցակ

համայնքի բնակիչների գույքահարկի զիջման

1.Վարդանյան Ալեքսան Ռուբենի -Մոսկվիչ -412 մակնիշի 28SO358 պ/հ փ/միջոցի գույքահարկը ընդամենը 30000դրամ, որից 2011թ.—11606դրամ, 2012թ.-11606դրամ 2013թ.-6788դրամ

2.Նադոյան Մայանե Ասադի -ԳԱԶ-24-10 մակնիշի ---պ/հ փ/միջոցի գույքահարկը ընդամենը 50000դրամ, որից՝ 2008թ -15475դրամ, 2009թ - 15475դրամ 2010թ.-15475դրամ, 2011թ.-3575դրամ

3.Գրիգորյան Սարգիս Պետիկի -ՎԱԶ 2121 մակնիշի 22 SS 424 պ/հ փ/ միջոցի գույքահարկը ընդամենը 19782դրամ, որից՝ 2012թվական -11746դրամ, 2013թ.—8036դրամ